ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ

ՀՐԱՄԱՆ

01 Նոյեմբերի 2021 թվականի N 190-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 14-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 696-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 5-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) խորհրդանիշի նկարագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Ծառայության խորհրդանիշի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ծառայության խորհրդանիշի պատկերի գործածումը և (կամ) տեղադրումը, ինչպես նաև այդ պատկերի կիրառումը այլ պատկերների համադրմամբ թույլատրվում է Ծառայության ղեկավարի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

Տ. ՈՒԼԻԽԱՆՅԱՆ

01.11.2021

X

ՏԻԳՐԱՆ ՈՒԼԻԽԱՆՅԱՆ

Signed by: ULIKHANYAN TIGRAN 2812830492

Երևան

Հավելված N 1
ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի
2021 թվականի նոյեմբերի 1-ի N 190-Լ հրամանի

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ

1. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) խորհրդանիշի տարրերն են բազեն և Հայաստանի Հանրապետության կառավարության շենքը: Խորհրդանիշն իրենից ներկայացնում է ոսկեգույն երիզով շրջանի մեջ պատկերված ընդհանուր կապույտ ետնապատկերով ամբողջական պատկեր՝ սեղանաձև հիմքով:

2. Խորհրդանիշի վերևի մասում պատկերված է թևերը պարզած բազե՝ հայացքն ուղղված դեպի ներքև, թևերը՝ անկաշկանդորեն տարածելով ընդհանուր պատկերի սահմաններից փոքր-ինչ դուրս: Բազեից դեպի ներքև տարածվում են ճառագայթաձև գծեր՝ ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարության շենքը: Բազեն և Հայաստանի Հանրապետության կառավարության շենքն ամբողջանում են իրենց շուրջ բացված հաստ օղակով, որը կատարում է շրջանակի դեր՝ իր մեջ հավաքելով ամբողջ պատկերը: Օղակի մեջ՝ ձախ կողմից դեպի վեր և աջ, գրված են «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» բառերը: Օղակի ներքևի մասում կառուցված է սեղանաձև հիմքային էլեմենտ, որի մեջ գրված է «ՊՎԾ» հապավումը:

3. Բազեն խորհրդանշում է սրատեսություն, զգոնություն, արդարամտություն և պատասխանատվություն:

4. Ոսկեգույնը խորհրդանշում է իմաստություն, արժանապատվություն և իշխանություն:

5. Շրջանը խորհրդանշում է ամրություն, համախմբվածություն և հավասարակշռվածություն:

6. Կապույտ գույնը խորհրդանշում է ազնվություն, բարեխղճություն, ճշմարտություն և վճռականություն:

Հավելված N 2
ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի
2021 թվականի նոյեմբերի 1-ի N 190-L հրամանի

ԽՈՐՀՐԴԱՆԻՇ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ